

25 - 31 Յունուար

Ձիւն եւ անձրեւ:

Հողագործներն ուրախ են:

Ածխավաճառներուն հետ խօսելը դժուար է:

Մայրե՛ր, մայրե՛ր.

Զգուշացէք ամսոյ մէջ մանչ զակի տէր ըլլալէ, որովհետեւ յունուարի մէջ ծնող մանչը կռուասէր կ'ըլլայ: Աշխատեցէք աղջիկի տէր ըլլալ: Յունուարի մէջ աշխարհ եկող աղջիկը տնտեսագէտ եւ սակաւախօս կ'ըլլայ: Երկուքէն մին ալ ըլլայ՝ դարձեալ կրատ:

ՓԵՏՐՈՒԱՐ

1 - 8 Փետրուար

Գիտէք արդէն, որ այս ամսուան մէջ կանայք քիչ կ'խօսին:

Հարաւը մէկ կողմէն կ'փչէ, հիւսիսը միւս կողմէն. երկու կողմերուն մէջ տեղ երերա՛ւ ու երերա:

Լրագիրներն ալ անանկ կ'փչեն:

Բժիշկները աղէկ ստակ կ'շահին:

Մարդասիրական ընկերութեան մը գանձապետն ընկերութեան դրամագլուխը հետը կ'առնէ ու հեռաւոր քաղաք մը կ'երթայ՝ օդափոխութեան համար:

Աստուած բժշկութիւն տայ:

8 - 15 Փետրուար

Հողմ եւ անձրեւ:

Կամուրջի վրայ զգուշացէք հովանոցներէն, որ աչքերնիդ չհանեն:

Առեւտրական հրապարակին վրայ շարժում մը կտեսնուի:

Ապառիկ մի՛ վաճառէք, այլ միշտ աշխատեցէք ապառիկ գնելու:

Ալեկոծութիւն:

15 - 22 Փետրուար

Անձրեւին վերջը չեկաւ:

Տեղ տեղ կ'ձիւնէ: